ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ԸՆՏԱՆԻՔԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Փամբակ համայնքի սիրելի՛ բնակիչներ, շնորհավորում եմ բոլորիդ Ընտանիքի օրվա կապակցությամբ:

Ընտանիքը, մայրությունը, հայրությունը և մանկությունը Հայաստանի Հանրապետությունում հասարակության ու պետության հովանավորության և պաշտպանության ներքո են:

Պետական և տեղական մակարդակներում երեխայի իրավունքների պաշտպանության քաղաքականությունը

ելնում է ընտանիքի ամրապնդման, ընտանեկան հարաբերությունները փոխադարձ սիրո ու հարգանքի վրա կառուցելու, ընտանիքի բոլոր անդամների փոխադարձ օգնության և պատասխանատվության անհրաժեշտությունից:

Ընտանիքը հասարակության բջիջն է, նրա կենսագործունեության կարևորագույն տարրը: Յուրաքանչյուր հայի համար հենց ընտանիքն է իր անձնական պատմության հիմնասյունը. սուրբ՝ ինչպես հայրենիքը:

Առողջ ընտանիքներից են դուրս գալիս առողջ գաղափարախոսությամբ քաղաքացիներ, ովքեր իրենց ներուժն ու կարողությունը ծառայեցնում են հայրենիքին:

Շնորհակալ եմ յուրաքանչյուրիդ՝ ձեր ընտանիքների ներսում մեր ազգային արժեքների պահպանմանը և փոխանցմանը նպաստելու համար:

Մաղթում եմ սեր, խաղաղություն և ներդաշնակություն ձեր ընտանիքներին:

Թող ձեր դաստիարակած զավակները արժանի լինեն հասարակությանն ու պետությանը:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան